ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ, ՓԵՏՐՎԱՐ 1, 1894 ԹԻՒ 2

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West 23d St. New York, N. Y. Vol. IV, 1894

ՏԻԿԻՆ ՀՐԱՉԵԱՅ

MME. HRATCHYA,

The Great Armenian Actress.

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատկեր Տիկին Հրաչէի.—Անգամ մ'ալ.— Տիկին Հրաչեայ.— Արտաքին Քաղաքականութիւն Հայոց. Անգլիա, Ռուսիա և Հայաստան. — Ծառ Տեառն Սարկ. ւագ Կարապետի ի Վերայ Շիրմին Լեւոնի Վերջնոյ.— Հայ Կինն Ազգային Վերածնութեան Գործոյն մէջ.— Պոլսական Նամականի. Աներևութէն. Համակ Ա.— Կարիքէն Թուրքք կը Գաղթեն.— Վանէն Տխուր Լուրեր.— Հայ և Թուրք ի Զարսանճագ.— Ամերիկայի Հայոց մէջ եռացումն.— Ամերիկայի Հայոց համար.ճարտար և անճարտար աշխատանք—Քաջալերիչ թղթակցութիւնք.— Այլ և այլք.

ԱՆԳԱՄ ՄԱԼ

«ՀԱՅԿ»ի Բաժանորդաց հարիւրին վաթսունն դեռ չէ վճարած։ Տարին մայնաւորապէս նեղ է, գործերն անգոհացուցիչ են։

Նաև անցեալ տարուան նուիրատուներու մեծ մասն այս տարի ծեռնպահ մնաց, և անոնք որ տուին՝ նուազ քան անցեալ տարի տուին։

Եթէ ՀԱՅԿի խմբագիրն յուսահատիլ գիտնար, կը յուսահատէր բոլորովին։

Նորա գանձ կը սպառի, բայց յոյսն, հաւատն յանդգնութիւնն է ը մնայ անսպառ։ Նա պէտք է ոչ միայն բաց պահէ այն նորօրինակ ազգային գպրոցն որ ՀԱՅԿ կը կոչուի, այլ և իւր գործունէութեան դժուար ու մեծ ծրագիրն աճեցուն զօրութեամբ յառաջ տանի այս տարի։

Կը լսէք այս որոշում, բարեկամք իմ և աջակիցք։ Եւ դուք, հարո՛ւստներ, մինչև ե՞րբ քեռն պիտի թողուք գործաւոր և անզօր դասուն։

ՏԻԿԻՆ ՀՐԱՉԵԱՅ

Հռչակաւոր հայ դերասանուհի ՏԻԿԻՆ ՀՐԱՉԷԻ պատկերն կը հրատարակեմք Երկայթուով, ելեքտրատիպ ընդօրինակութեամբ առնելով ՄԱՍԻՍԷն։ «Իւր արուեստին փափկութիւնը ընդգացող և իւր դերին ըմբռնումն ունեցող» տրուեստագէտ մ'եղած է Տիկին Հրաչեայ և «1872էն 1882 հայ թատրոնին ամենէն աւելի փայլ տուող անուններէ մէկն» լինելով՝ «Վոսփորի ու Կուրի ափանց վրայ ծափահարուած է հաւասար խանդավառութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԱՆԳԼԻԱ, ՌՈՒՍԻԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Ա.

Հայկական Խիդիրն ներքին և արտաքին դժուարութիւններ ունի։ Ներքին դժուարութիւնն կարելի է համառօտիւ բովանդակել սապէս.— որպէս զի ինքնօրէն և ազատ լինի Հայաստան, հարկ է որ Հայքս բնաւորութեամբ և կրթութեամբ ինքնօրէն և ազատ կեանքի այժմէն վարժուիմք, պատրաստուիմք։ ԱՐՏԱՔԻՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆն թէև էական չէ, սակայն և այնպէս հզօր է։ Զայս բացատրելու համար բաւական կը լինի կրկնել թէ Բ. Դուռն եթէ այսօր (ենթադրեմք) ուզէր Օսմ. Հայաստանն ինքնօրէն անել, առանց օտար տէրութեանց ոմանց բարեյօժարութեան, չպիտի կարենար։ Սուլթանն այսօր ազատ է իւր երկրի ամբողջութիւնն պահպանելու համար պատերազմելու, ապստամբութիւններ զսպելու, բայց ազատ չէ ամբողջութենէն խորելու՝ օտարին պարգևելով կամ իւր հպատակաց ինքնօրէն տրամադրութեան ներքև դնելով երկրին այս կամ այն մասն։ Ռուսիա, Անգլիա և Ֆռանսա շատ զգուշութիւններ արած են զԹուրքիա պաշտպանելու համար, (Ռուսիա պաշտպանած է զայն Իպրահիմ Փաշայի դէմ և Ֆռանսա ու Անգլիա պաշտպանած են զայն Ռուսիոյ դէմ,) և ուստի իրաւունք ունին անոր բաժանման գործին խառնուելու, ինչպէս ցարդ խառնուած են, և բարեհաճեր են մէկ մէկ կտոր իրենց բաժին հանելու, օրինակի համար զԿարս, զԿիպրոս, զԵգիպտոս, զԹունիզ, և այլն։

Այդ բարի տէրութեանց հոգն այսօր այն չէ թէ ինչպէս կարելի է գօրացունել, բարեկարգել Օսմ. պետութիւնն, այլ թէ ինչպէս պէտք է անոր բաշխումն անել։ Իբրեւ գլխաւոր ժառանգորդք կեցեր են Ռուսիա, Անգլիա և Ֆռանսա։ Մեք Հայքս ալ կը պնդեմք թէ մեք ալ ժառանգութեան իրաւունք ունիմք։ Օսմ. պետութեան մէկ մասն մեր հարց ստացուած-

քըն է, մեք այն մասին յարած մնացած եմք դարէ ի դար՝ այն յուսով որ այն դարձեալ մերն կը լինի: Վկա՛յ պատմութիւնն, վկայ Հայաստանի գիւղերուն, դաշտերուն, լերանց ու քաղաքաց անուններն որք մեծ մասամբ հայերէն են, վկա՛յ աւերակներն, գերեզմաններն, և վկայ Աստուած և իւր տաճարներն բազմադարեան:

Մի բան ընթերցողին կը յուսամք որոշ երեւաց վերի տողերէն: Այն տէրութիւններն որոց կը դիմեմք մեք որ մեր խնդիրն կատարեն, ճիշդ նոքա են մեր մրցակիցներն ի ժառանգութեան, և քան զմեզ անհամեմատելի կերպով հզօրագոյն են:

Ինչպէս եղած է հարիւր տարիէ ի վեր, նոյնպէս պիտի շարունակուի դեռ տարիներով— տէրութիւնք պիտի պաշտպանեն Օսմ. պետութիւնն և պիտի չընորհք անեն զայն բաժնելու իրենց մէջ— «զի մի՛ ինչ կորիցէ» Թուրքիա դատապարտուած է բաշխման. նորա անկումն նոր տեղի պիտի չունենայ, նա արդէն անկեալ է: Տէրութիւնք «Հիւանդ Մարդուն» մէջ շունչ կը պահեն մինչև որ ժառանգութեանց կամ յաջորդութեանց խնդիրն որոշուի:

Հոս ի դէպ է իբրև ի փակադծի նշանակել մեր մէջէն ոմանց խակամտութիւնն որով կը կարծեն թէ մեր խնդրոյն յաջող լուծման համար բաւական է զարնել սպաննել յաջ և յահեակ, թո՛ղ անմեղ հովիւ մի լինի զարնուածն կամ մեղաւոր ոստիկան մի, հոգ չէ: Այսպիսեաց պէտք է հասկացունել թէ մեր գործն Թրքաց յաղթել չէ, օսմ. պետութիւնն կործանել չէ, և ոչ վրէժ լուծել: Եթէ այսօր միջոց գտնէինք բոլոր այդ երկիրն խառնաշփոթելու և անիշխանութեան մատնելու, դարձեալ այդու մեր նպատակին չէինք հասնիր. զի հզօրագոյնք պիտի մըխուին ի մէջ և վերջին խօսքն նոքա պիտի խօսին արդար կամ անարդար:

Բ

Որովհետև մեր ազգային Խնդրոյն լուծման մէջ այնքան մեծ բաժին պիտի ունենան մեծ տէրութիւնք, հարկ է որ նոցա իւրաքանչիւրին ներքին և միջազգային քաղաքականութիւնն, ձգտումներն և շարժումներն լաւ ուսումնասիրեմք և ըստ այնմ շարժիմք:

Նորածին ինչպէս նաև հին և հզօր պետութիւնք Եւրոպիոյ մեծ խնդիր մ՚ունին իրենց առջեւ, որ «Արեւելեան Խնդիր» կը կոչուի, բայց զոր կարելի էր կոչել նաեւ «ռուսական», բայց ինչ անուամբ ալ որ անուանեմք, խնդիրն եւրոպական մեծ խնդիրն է, և է սա— թէ ինչպէս պարտ է դէմ դնել Ռուսիոյ սպառնալից աճմանն ու ողողիչ յորդմանց: Բոլոր Եւրոպիոյ համար հոգ է այս, բայց մասնաւորապէս Անգլիոյ, որ իւր վտանգաւոր և ուժեղ մրցակիցն կը տեսնէ այդ յաղթանդամ և սուր ախորժակով պատանի պետութեան մէջ:

Անգլիա, այդ հզօր, հաստատակամ և մեծ ազգ, հանդէպ Ռուսիոյ, յանձն չառնուր ասել «Նմա պարտ է աճել և ինձ մեղմանալ:» Կը հնարի խոչընդոտնել իւր ոսոխին յառաջխաղացութիւնն դէպ ի Միջերկրականն և դէպ ի Հնդկաստան: Խրիմու պատերազմին ա՛յդ էր նպատակն: Բայց աւելի վճռական ընդհարում մի կը սպասուի այդ երկու վիթխարի տէրութեանց միջև, և որքան աւելի յետաձգուի ընդհարումն, ա՛յնքան նուազ վտանգաւոր պիտի լինի Ռուսիոյ և աւելի դժուար Անգլիոյ համար, զի «Պատանին» զարմանալի ախորժակով կ՚ուտէ և կը զօրանայ:

Անգլիա այդ վճռական ընդհարման համար բարեդէպ պարագայից կը սպասէ: Որպէս զի իւր նպատակին ծառայէ պատերազմն, պէտք է այնպէս պատերազմի որ Ռուսիոյ չյաղթէ պարզ՝ հասարակ յաղթութեամբ, այլ ջախջախէ զայն, յօշոտէ, անդամատէ, և դատապարտէ զայն երկար շրջանի մի համար հեռու մնալ Հնդկաստանէն: Մեծն Բրիտանիա այդպիսի ճմլիչ յաղթութեամբ իւր ոսոխն ընկճելու կարող չէ ինքն միայնակ. պէտք է որ հզօր նիզակակիցներու հետ իյնայ թըշնամւոյն վերայ: Այս տեսակէտէն կը դիտէր նա Եւրոպիոյ հակընդդէմ երկու նիզակակցութիւններն, առանց անձամբ միանալու: Երկար ատեն Գերմանիա, Աւստրիա և Իտալիա հակակշռեցին Ֆրանսընդռուս նիզակակցութիւնն և պահպանեցին խաղաղութիւնն: Եթէ պատերազմն ծագէր, Անգլիա իւր օգնութիւնն իրեն նպաստաւոր լաւագոյն պայմաններով պիտի ընծայէր Երրեակին ընդդէմ Երկեա-

կին, մանաւանդ երբ տեսնէր թէ Ռուսիոյ կողմն յաղթող հանդիսանալ կը սպառնայ։

Սակայն տարիներէ հետէ չայլօրէն պատերազմի պատրաստուելով երեք տէրութիւնքն այժմ աւելի անպատրաստ են պատերազմի։ Գերմանիա և Աւստրիա ներքին ելմտական, ցեղային և այլ պէսպէս դժուարութեանց մէջ են, և Իտալիա, ուժաթափ և անարծաթ, հազիւ յարգելի անդամ է այսօր երրեակ Նիզակակցութեան։ Լաւ ոչ ծովային և ոչ ցամաքային զօրութիւն ունի. զօրքն լաւ զինեալ չեն և ոչ ալ քաջ կրթուած։ 1889—90 թուականին նորա մուտքն էր 76 միլիոն անգլիական լիրա. 1891—92ին ինկաւ 66 միլիոնի, և 40 միլիոնի բաց թողուց ելմտացուցին մէջ։ Իւր ելամտի գրեթէ կէսն ահագին պարտուց տարեկան տոկոսին նուիրելու ստիպուած է, այս նկատմամբ ըղ-Թուրքիա միայն իրեն մխիթարութիւն ունենալով որ երբեմն իւր ելամտի 100ին 70ն տոկոսի վճարման կը զոհէ։ Դիւանագէտք կը կարծեն թէ Իտալիա կա՛մ ազգային սնանկութիւն յանձն պիտի առնու և մեծ տէրութեանց դասէն անկանի, կա՛մ պիտի հրաժարի երրեակ Նիզակակցութեան անդամակցութենէն և՝ փոխառութեան համար Ֆռանսայի դիմելով՝ պիտի մտնէ Ֆռանսըռուս Նիզակակցութեան մէջ, քանի որ Գերմանիա և Աւստրիա չեն կարող իւր ելմտական տագնապն փարատել։

Իտալիոյ տկարութեամբ կը տկարանայ երրեակ Նիզակակցութիւնն, և արդէն գերակշռութիւնն Ֆռանսըռուս միաբանութեան անցած կը համարուի։ Արդէն դիւանագիտական ասպարէզին մէջ այդ երկուքն մանր յաղթանակներ կը տանին։

Ուժերու հաւասարակշռութիւնն այսպէս խանգարեալ լինելով՝ Անգլիա անհանգիստ է, և իւր դիւանագիտաց մէջ կան որք կը պնդեն թէ պարտին իրենք Իտալիոյ փոխ տալ և երրեակ Նիզակակցութեան անդամակցելով գերակշռութիւնն Ռուսիոյ հակառակ կողմին վերադարձունել(*)։ Անգլիա, Գերմանիա, Աւստրիա և Իտալիա ահաւոր ոյժ մի կը կազմեն, և թերևս Թուրքիա ալ կը միանայ նոցա իւր ապագայն ապահովելու անուշիկ յուսով։ Փոքր պետութիւնք ոմանք ալ կը միանան այդ դէպքի մէջ վերի հնգին և կրնան ամենն ի միասին բերել Ռուսիոյ և Ֆռանսայի վերայ ջախջախիչ պարտութիւն։ Եթէ տէրութիւնք այդպիսի պատերազմով այդ օրինակ հարուած տան Ռուսիոյ, տարակոյս չկայ թէ Անգլիա գերագոյն ճիգեր պիտի թափէ զՌուսիա անդամատելու, պզտիկցունելու։ Կրնայ լինիլ որ ուզէ զՀայաստան և զԿովկաս նորա ձեռքէն խլելով կա՛մ իւր թեւարկութեան ներքեւ առնուլ և կամ հայկական իշխանապետութիւն մի հիմնել իբրեւ քարընդոտն Ռուսիոյ ապագայ յառաջխաղացութեան։ Անգլիա այդ պատերազմի մէջ որքան մեծ և կարեւոր դեր կատարած լինի, այնքան ազդեցիկ կը լինի իւր ձայն վերջնական կարգադրութեանց պահուն, և կրնայ պատահիլ որ զԿ. Պոլիս, զոր գրաւած պիտի լինի պատերազմի սկիզբն, այլ ևս Թրքին չյանձնէ, առարկելով թէ գրաւումն շարունակելով ինքն աւելի լաւ կրնայ պաշտպանել զայն Ռուսիոյ դէմ։

Սակայն այս ամենն ոմանց ենթադրութիւններ են, զորս լաւ է մեզ գիտնալ, բայց բնաւ այդ անգլիական հակառուս դաղձանաց վերայ չենք կարող ձեւել մեր արտաքին քաղաքականութիւնն։

Շարունակելի

*Այս մասին տեսնել Lavin ծածկանուամբ ստորագրուած յօդուածն Անգլիական Fortnightly Reviewի Յունվար թուոյն մէջ—The Triple Alliance in danger.

ՃԱՌ
ՏԵԱՌՆ ՍԱՐԿԱՒԱԳ ԿԱՐԱՊԵՏԻ

Ի ՎԵՐԱՅ ՇԻՐՄԻՆ ԼԵՒՈՆԻ ՎԵՐՋՆՈՅ

խօսեցեալ ի Սէն-Տընի, 26 Նոյ. 1893

Ա՞յս է ահա ուրեմն, պանդո՛ւխտ հայրենակիցներ, Հայոց վերջին թագաւորի շիրիմը. ա՞յս հայ անցած փառքի յետին մնացորդը. ա՞յս այն վայրը, ուր այնքան անգամ հայ պատանու երևակայութիւնը սաւառնել, պանծալի նախնեաց ստուերները գերեզմանից դուրս է հրաւիրել. Հի՞նգ հարիւր տարի՝ ծանրանում է գետնի վերայ այս կափարիչը, հի՞նգ հարիւր տարի՝ Հայը զրկուած է երկնակամարի

տակ մի թիզ գետին իսկ իւրն անուանելու իրաւունքից. հի՜նգ հարիւր տարի է որ իւր վերջին շունչը փչել է հայ անուան ներկայացուցիչը քաղաքական աշխարհի առաջ. «Հայոց Թագաւոր» անունը աննշանակ մի հնչիւն է դարձել, առասպելների շարքն անցել, և մինչ այսօր աշխարհի տէրերը այդ անունը մեր գրքերից, մեր սրաերից քերել են ջնջում, այս քարն է ահա, որ կարծես դիտմամբ պանդխտութիւն է յանձն առել Եւրոպայի կեդրոնում, լուսաւոր աշխարհի առաջ, մեր պանդուխտ, մայրենի հողից կտրուած Հայերիս առաջ վկայելու, թէ կար ժամանակ, երբ մեր սեփական աշխարհն ունէինք, մեր Թագաւորն ունէինք։ Այս քարը կարող ենք կնիք համարել այն մատեանի, որի մակագրութիւնն է՝ Հայոց Պատմութիւն. իսկ այդ պատմութեան վերջին տողն ահա այնտեղ՝ օտար հողի վերայ, օտար գրերով դրոշմած— Լեւոն Ե. Թագաւոր Հայոց։ Խորին պատկառանք և սրդիական երկիւղածութեամբ խոնարհինք, Հայեր, այս նուիրական դամբանի առաջ, թո՛ղ սակայն մեր երկիւղածութիւնը արգելք չլինի դիտելու, տեսնելու, թէ ինչ է ծածկուած այդ կնիքի ներքոյ. բաւական է, որքան մեռեալ տառ մնաց Հայոց պատմութիւնը. ժամանակ է բանալ այդ մատեանը. բանալ հաւատարիմ զաւակի բոլոր ակնածութեամբն ու զգուշութեամբ, ճշմարիտ հայրենասէր որդի ջերմ հեռաքրքրութեամբ, բայց և անաչառ քննադատի ուղղատես աչքով, քննել ու տեսնել, ինչն է պատճառ, որ մի ժամանակ մեր Թագաւորն ունէինք և այժմ չունենք, թէ մեր ազգի տխուր անցեալը ինչ դաս է մեզ ուսանել, ինչճանապարհ մեր առաջ գծել, որպէս զի ապրել և Թագաւորով կամ անթագաւոր նախկին փառքին հասնել կարողանանք։—Այդ անցեալի առաջին ամենամեծ բաժինը մութն է մեզի համար՝ նման հեռուից հնչող մի երգի, որի ձայները տխրաժ և ընտանի են ականջիդ, տաքացնում են սիրտդ, բայց մտքիդ ցրոշ բան չէն ասում։ Թողնենք այդ հեռաւոր անցեալը և կանգ առնենք այն թշուառ ժամանակակետի վերայ երբ Հայաստանի նուիրական հողը բարբարոս հրոսակների ներքոյ վերջնականապէս ոտնակոխ եղաւ, իւր սեփական տուն ու տեղից զրկուած Հայը ծտարութեան մէջ ապաստանարան որոնել ստիպուեցաւ և հիմնեց այն վերջին Թագաւորութիւնը, դրի վերջին ժառանգի յիշատակը տօնելու ենք ժողովուած։ Բոլորովին անհիմն և մտացածին է այն հայեացքը, թէ Հայաստանի այսպիսի թշուառութիւնը այն օրից է ըսկսում երբ քրիստոնէութիւնն այնտեղ իշխող դարձաւ, և այն պատճառով, որ Հայն այնուհետեւ իւր արեւելեան դրացիների հետ թշնամացաւ, քրիստոնէութեան խաղաղասէր սկզբունքների տակ մեղկացաւ, տկարացաւ. Հայի կռիւը արեւելքի հետ Տրդատի օրով, Վարդանի պատերազմով չէ սկսում. այդ կռուի մասին սեպագիր արձանագրութիւններն են պատմում. իսկ քրիստոնէութեան խաղաղասէր սկզբունքներն ամեն տեղ հերոսնէր են միայն կըրթել և ոչ թէ սիլնքոր մի ամբոխ, ազատութեան օրէնք է նա և ոչ ստրկութեան. նորա սովրեցրած հեզութիւնը ստորաքարշութիւն չէ։ Ո՞վքեր են մեր պատմութեան պարծանքը, մեղ կորով ու ազնուրութիւն ներշնչող քաջարի նախնիք. ի՞նչ մթնոլորտի մէջ, ո՞ր օրէնքի ներքոյ են սնուել և ա՜մ դրօշակի համար կռուել մեր Վարդանն ու Վահան, մեր Մուշեղներն ու Մանուէլներ ու Սմբատներ, մեր Աշոտներ ու Գուրգէններ, Թորոսներ ու Լեւոններ։ Անփորձ մարդու աչքը միայն արտաքին շուքն ու փառահեղութիւնն է տեսնում. իսկ ով որ իրերի խորքը քննել ու շափել գիտէ, նա պէտք է ճանաչէ որ հայ ժողովրդի մէջ գուցէ ոչ մի ժամանակ այնքան ներքին զօրութիւն ու թարմ այժ չէ եղած, որքան հէնց նոյն Զ և Է դարերում, երբ ըստ երեւութին մեր երկրի վիճակը ամենաանկեալն էր։ Միայն մի բարոյապէս առողջ և ուժեղ ժողովուրդ կարող էր ծնել այն հերոսների, որոնց մասին պատմում են Սեբէոս, Ղեւոնդ, Տարոնի պատմիչները։ Ո՞ւր էր այդ զօրութիւնը, որ աշխարհի առաջ աչքի ընկնող կերպով չարտայայտուեցաւ. ինչո՞ւ այդ ժամանակի Հայերը մի մեծ պետութիւն կազմել չկարողացան։— որովհետեւ նոցա ոյժերը ներքին պառակտումների չնորհիւ չվատուած էին, մի ընդհանուր զեկավարի ձեռքում չէին գտնուում։ Այդ պառակտումն, դորա հետեւանք անմիաբանութիւնը Հայի քնի ծին յատկութիւնը չէր, ինչպէս յաճախ ասուում է. ժամանակի ընթացքում միայն սովորութեան ուժովայդ

կորստաբեր դրութիւնը մեր մէջ արմատ բռնեց. միջին դարերում Եւրոպայի բոլոր քրիստոնեայ ազգերն ևս այդպէս պառակտուած էին։ Քրիստոնէութիւնն էր ուրեմն նոցա պառակտման պատճառը։ Այո՛, եթէ կուզէք, մասամբ իւիք. ուրիշ շատ պատճառների հետ նա ստեղծել էր իրերի մի վիճակ, ուր այլ ևս անհնար էր այնպիսի ահագին բռնապետական պետութիւններ կազմել, ինչպիսիք էին և են մասամբ մինչև այժմ ասիական տէրութիւնները. որոշ չափով ինքնաճանաչ, առողջ դատողութիւն և գաղափարների. հոգու և սրտի տէր մի հասարակութիւն թոյլ չէր տար այլ ևս իրան անշունչ առարկաների պէս գործածել. նոր կարգ և նոր օրէնք պէտք էր, բայց այդ նոր կարգը հաստատելու համար ժամանակ պէտք էր, մինչև որ ժողովուրդը հասունանար։ Եւրոպական ազգերը միայն իրարու հետ, իրենց ներքին կռիւների հետ՝ գործ ունենալով ժամանակ գտան դարերի ընթացքում այդպիսի մի կարգ մշակել և այսօր մեր աչքի տակ գտնուող նոր քրիստոնեայ պետութիւնները հաստատել։ Ոչ ինչ մեզ չէ արգելում կարծել, թէ Հայոց ևս նոյնը անել պիտի յաջողէր, եթէ բաղդը նոցա նոյնպիսի պայմաններին ներքոյ դրած լինէր։ Է. դարում նոքա երկու հարեւան մեծ ազգերի՝ Յոյների և Պարսից, հետ համեմատած գուցէ շատ աւելի մեծ բարոյական ոյժ ունէին, աւելի զօրեղ ու թարմ տարր էին կազմում և ուստի կը կարողանային երկուսի լուծն թօթափել. նախասիրայի մէջ իշխող դիրք բռնել, եթէ Արաբները հանդէս չգային։ Ով սոցա ոյժը պատմութիւնից ճանաչում է նա միայն զարմանալ կարող է, թէ ինչպէս Հայերը այս ահագին հեղեղի առաջ դեռ դիմանալ կարողացան և շատ ժամանակ չանցած գլուխ բարձրացրին։ Բաւական է միայն սպանիական քաջարի ազգի կրածը աչքի առաջ ունենալ և մտածել, որ այստեղ Արաբները այն ժամանակ միայն յայտնուեցան, երբ նոքա իրենց առաջին ոյժը և եռանդը մասամբ կորցրել էին, քաղաքակրթուել, մինչդեռ Հայաստանի վերայ նոքա յարձակուեցան անապատի զաւակների բորբոք մոլեռանդութեան բոլոր առաջին թափովն։ Եթէ մի դար ևս անցած լինէր գուցէ Հայերը նոյնիսկ, իրենց մէկ կարլոսի բռան տակ միացած, այս հեղեղին դէմ դնել կը կարողանային. այդ գը լուխ բերելու համար արդէն վայրուց փորձեր սկսել էին և ցոյց էին տալիս մինչև իսկ յաջողութեան նշաններ, այդ փորձերը յետոյ ևս շարունակուեցան, բայց աւաղ այնպիսի մի կատաղի թշնամու հանդէպ, այնպիսի դժբաղդ հանգամանքներում, որ նոքա Հայի անկոտրում ոյժը աւելի ևս իսպառ ջախջախելու օգնեցին։ Ա՜հ, ի՛նչքան մեծ և դիմացկուն պէտք է եղած լինի այդ ոյժը, որ արաբների սրի տակից դուրս գալուց յետոյ իսկ Հայերը Բագրատունեաց, Արծրունեաց, Սիւնեաց պատկառելի թագաւորութիւնները հաստատել կարողացան։

Սակայն ժամանակ է այս օրուայ հանդիսի բուն առարկային դառնալ։ Լեւոնի իշխած թագաւորութեան կանգնմանն և անկման պատճառները որոնել։ Ինչպէս յայտնի է այս թագաւորութեան հիմնողներն եղան այն կարիճներն, որոնց բաղդը իրենց հայրենիքից հալածել էր։ Այդպիսիների թիւը շատ շատ էր և նոցա զօրութիւնը այնպէս չնչին չէր որ օտարութեան մէջ շուտով խորտակուէր։ Ամբողջ ԺԱ. դարի ընթացքում անընդհատ դէպի արևմուտք դիմելով և արդէն առաջուց եկածների հետ միանալով՝ Հայերը կեդրոնացան հետ զհետէ Փոքր Ասիայի զանազան կողմերում և հաստատեցին մինչև իսկ մի քանի անկախ իշխանութիւններ, որոնցից մէկն էր ահա՝ ամենից զօրեղը և տեւականը՝ Ռուբինեանց իշխանութիւնը Կիլիկիայում, որ շատ ժամանակ չանցած թագաւորութեան փոխուեցաւ։ Եթէ աչքի առաջ ունենանք այն բոլոր դժուարին ու ձախող հանգամանքները՝ ներքին տնընդհատ խռովութիւններն ու ցեղակից իշխանների թշնամութիւնը, գուրսը Բիւզանդական մեծ կայսրութեան և բազմաթիւ թուրք հրոսակների դէմ վարած մշտական կռիւները— պիտի ասենք թէ այս իշխանութեան հաստատութիւնը մի յաղթական գնացք էր, որ հայ անուան աւելի է փառք բերում քան Մեծ Տիգրանի աշխարհակալութիւնները։

Այս ժամանակի մի գլխաւոր յատկանիշը պէտք է համարել Հայոց թագաւորների բռնած դիրքը այն կորստաբեր եկեղեցական վէճի նկատմամբ, որ յայտնի է միութեան խնդիր անունով, և այս խնդիրը առանձնապէս ուշադրութեան պէտք

է առնել, որովհետև նորանից ծագեց այն դժբաղդութիւնը որ մեր թագաւորութեան վերջին հարուածը տուաւ, այդ է անհաւատարմութիւն դէպի ազգային հաւատը, դէպի Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին։ Դեռ Արշակունեաց հարստութեան օրով աշխատում էր եկեղեցին նախարարների կեդրոնախոյս ձգտումներին դէմ դնել. նոցա ցրուած ոյժերը իւր հովանու ներքոյ միացնել. եկեղեցու հայրապետն էր, որ երբեմն գրեթէ թագաւորից աւելի յարգ էր վայելում, որ ամեն դժբաղդ հանգամանքներում հանդէս էր գալիս իբրեւ ամբողջ ազգի ներկայացուցիչն և նախարարների գլուխ անցած հոգում ընդհանուրի բարօրութեան և ապահովութեան մասին։ Այս ամենը անծանօթ չէր այն Հայերին, որոնք Ռուբինեանց գահին շուրջն էին խմբուել։ Նոքա պէտք է ըզգային, որ մայրենի երկրից անջատուած լինելով մանաւանդ՝ միայն ազգային եկեղեցու գաւթում օտարի ազդեցութիւնից ազատ մնալ, հարազատ հայենական մի հաստատուն գետին գտնել կարող են. այդ տեղ միայն հայրենիքում մնացած և ուրիշ աւելի հեռու տեղեր ցրուած ազգի մնացորդների հետ միանալ, մի ամբողջութիւն կազմել։ Եթէ նոքա այս չըզգային էլ, օտարները զգալ էին տալիս, ամենից աւելի Բիւզանդիոնի խորամանկ կայսրները, որ արդէն շատ դարեր առաջ ճանաչել էին, թէ հայ ազգի ինքնուրոյնութիւնը խորտակելու, նորան իրենց հպատակ դերին դարձուցնելու միակ միջոցն էր այդ ինքնուրոյնութեան պահպանող ոյժը խլել, Հայի հաւատը Յոյնի հաւատին, Հայոց եկեղեցին Յունաց եկեղեցուն հպատակ դարձնել—միացնել։ Ահա այս տեղից էր ծագել միութեան խնդիրը որ դարերի ընթացքում մի քանի անգամ արծարծուելուց և միշտ անյաջող ելք ունենալուց յետոյ մի դար շարունակ զբաղեցրեց նաև Կիլիկիայի Հայերին։ Քաղաքական կեանքի կեդրոնը այստեղ տեղափոխուելուց յետոյ, բնական բերմամբ, այստեղ էր փոխադրուել նաև եկեղեցական կեանքի կեդրոնը՝ հայրապետական աթոռը, իսկ այդ աթոռի վերայ բազմողները մեծանուն Պահլաւունիներն էին՝ Գրիգորներ ու Շնորհալին Ներսէս։

(Մնացեալն յաջորդ թուով)

ՀԱՅ ԿԻՆՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՑՆ ՄԷՋ

Այր մարդիկ թաղեցին զՆեւոն,
Կիներ պիտի յարուցանեն զայն։
ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Եթէ մեր ազգի ներկայ վիճակն բաղդատեմք 100 կամ 50 տարի առաջուան վիճակին հետ, ներկայն աւելի յուսափայլ գործող պայմաններուն մէջ պիտի գըտնեմք և զայն թէ զարդիս մեր մէջ ուսեալ, մշակեալ, ուսուցիչ, գրող, բժիշկ, դերասան կիներ կան, և դոցա թիւն արագապէս կը ստուարանայ։ Ռուսահայոց դստերք երկսաանեակներով կը համրուին որք ի Զուիցերիա և այլ կողմեր բարձր կրթութիւն առած են և կ'առնուն։ Թըրքահայոց մէջ ևս աղջկանց հասարակ և բարձր վարժարանք կէս դարէ ի վեր հաստատուիլ և բազմանալ սկսած են։ Ինչպէս բացում անգամ ասացած եմք, նորէն կ'ասեմք, և չպիտի յոգնիմք կրկնելէն թէ ազգի փրկութիւն ազգի փոխուելով, կրթուելով կը լինի. այդ է ազատութեան էական, բուն պայմանն. այդ պայմանին համաձայն բարւոք արտաքին կառավարութիւն մ'ալ կրնամք ձեռք բերել եթէ միջազգային դարձուածք նպաստեն և եթէ իմաստութեամբ շարժիլ գիտնամք։

Հայ կնոջ բարձր արժէքին, նորա ազգային լեզուի և բարուց նախանձոտ պահապանի դերն քաջ պարզուած է մեր ողբացեալ Բաֆֆիի հետևեալ տողերուն մէջ։—

«Ոչ ինչ վերանորոգութիւն մի ժողովրդի կեանքի մէջ չէ կարելի կատարել առանց կնոջ մասնակցութեան։ ... Եւ այս անգամ պատրաստեցայ Հայաստանում և ամեն տեղ ուշի ուշով ուսումնասիրում էի հայ կնոջը։ Իմ ստացած տեղեկութիւնները խիստ միսիթարական հետևանքի են հասցնում։ Որքան տգամարդը Թուրքերի ազդեցութեան տակ խարդախուած է, փչացած է, որքան նա կորցրել է իր հայկական ինքնուրոյնութիւնը,— այնքան կինը պահպանվել է իր բարք ու վարքի բարո-

յական անարատութեան մէջ։ Կանանոցի չորս պատերի մէջ փակուած կինը, թէև դարերով անջատուեցաւ, բթացաւ և զրկուեցաւ հասարակական մարդ լինելուց, — բայց միւս կողմից, նա իր այդ բանտարկութեան մէջ պահպանեց հայութիւնը։ Դա մեծ գործ է։ Այդ կարելի է տեսնել ամենահասարակ մանրամասնութիւնների մէջ անգամ։ Կնոջ զգուանքը դիպի մահմետականութիւնը հասնում է սարսափելի մոլեռանդութեան. ամեն ինչ որ գալիս է գալիս մահմետականի ձեռքից, նա պիղծ է համարում։ Ես լսել եմ հարիւրաւոր պատմութիւններ, որ մահմետականներից յափշտակված կինը, աղջիկը կա՛մ վերջապէս փախչում է, կամ եթէ չէ յաջողվում, անձնասպան է լինում։ Բայց ազատմարդի վերաբերութեամբ այս տեսակ օրինակներ խիստ սակաւ են։ Շատ տեղերում, մանաւանդ քաղաքներում, Թուրքերէն լեզուն հայ մարդու բերնում բոլորովին սովորական է դարձել, բայց ես չտեսայ մի կին, որ Թուրքերէն խօսէր, կամ գոնէ գիտենար այդ լեզուն։ Հայ լեզուն ընտանիքի մէջ պահպանողը և իր զաւակների բերանը դնողը կինն է։ Հայերի աներում ծառայող քրդերը և քրդուհիները բոլորը հայերէն են խօսում։ Կինը տուեց մեզ լեզու, ազգութիւն և պահպանեց հայ ընտանիքի բարոյական հիմունքը։ Այժմ նա մի անարատ, շապականուած և անմշակ նիւթ է մեր ձեռքում, որից կարելի է հրաշալի բան շինել։» (ՄԵՆԹԸ, երես 209)

Քաղաքակիրթ երկրաց մէջ հայ կինն կը մտածէ՞ արդեօք իւր այն քոյրերու վերայ որք բարբարոս ժողովրդոց մէջ ընտանեկան յարկին պահապան կեցած են դարերէ ի վեր, հայ լեզուն և միայն հայ լեզուն խօսելով և ուսուցանելով իրենց զաւակաց։ Չկրնար պահանջուիլ որ Ամերիկայի կամ Պուլկարիոյ մէջ հայ աղջն երկրին լեզուն չուսանի, այդ կը լինէր անտեղի. բայց կրնայ պահանջուիլ որ մայրեր հայերէն և միայն հայերէն խօսին իրենց զաւակաց հետ, որք ուրիշ ազգիներէ ինքնին և անջան կուսանին տեղական լեզուն։

Նիւ Եորքի և շրջակայից մէջ կան ոչ սակաւ հայ կիներ որք կարող են միաբանութիւն մի կազմել և հայրենիքի թշուառաց կրթութեան և ազատութեան համար բան մի անել ըստ իւրեանց կարի. ինչո՞ւ չեն շարժիր։ Եթէ ուզեն կարող են Ամերիկայի Տիկիններ ալ իրենց միացունել և կազմել զօրաւոր ընկերակցութիւն մի յօգուտ ազգային Գործոյն։

Նոյնն կ'ասեմք ամեն տեղւոյ և երկրի հայ կանանց և օրիորդաց. ժամանակ է որ միանան ու հայ ազգի վերանորոգութեան մեծ գործոյն մասնակցին։

ՊՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ԱՆԵՐԵՒՈՒԹԷՆ

ՆԱՄԱԿ Ա.

ՑԱՂԱԳՍ ՄԱՄԳԱՐԷՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս, 5 Յունվար, 1894

Բարե՛կամ,

Ինչպէս ասացի, այնպէս եղաւ։ Եա ամիսներ առաջ գուշակեցի թէ 1893էն անմիջապէս յետոյ պիտի գայ... 1894 թուականն և եկաւ։ Այս յաջող նախագուշակութիւնս լաւ միաք պահեցէք, բայց, կը խնդրեմ, մարգարէ չդնէք անունս։ Կըրնայ մէկ գուշակութիւնս պատահարար ուղիղ լինիլ, սակայն, ինչպէս առածն կ'ասէ, «մէկ ծաղիկով գարուն չի գար։»

«Մէկ ծաղիկով գարուն չի գար։» Ի՞նչ լաւ կը լինէր եթէ օսմանեան քաղաքագէտք այդ առածին միտքն, իմաստասիրութիւնն ըմբռնէին. այն ատեն շատ տարբեր կերպիւ պիտի վարուէին Հայոց հետ։ Շատ ծաղիկներ, ոչ սակաւք կարմիր ուշագրաւ գունով, կ'երևին Թուրքիոյ սուրբ հողին վերայ վերջերս. և վերածնական եղանակի մի գալուստն կ'աւետեն։ Ոչ ոք, թէև լինի հկօր միապետ, կարող է գարնան գալն արգելուլ ճմլելով մի քանի ծիլ ու ծաղիկ. սակայն կայ մարդ մի— Սուլթան Համիտ Բ.— որ անգութ եռանգով կը ջանայ զանկարելին կարենալ— սպանելով հինգ Հայեր որպէս թէ կարելով 5 ծաղիկ— ուրանալ, խափանել մերձեցող գարունն, դէմ դնել Բնութեան անդիմադրելի ընթացքին.....։

Ներեցէ՛ք, բարեկամ, կախման կետեր դնելու սովորութիւնն իսպառ թօթափել չեմ կրցած։ Եւ զի՞ օսմանեան գրաքննութիւնն այնքան մեծ յանցանք համարի

զայդ՝ միթէ հինգ կախման կետ դնել աւելի մե՞ծ ոճիր է քան հինգ անմեղներ կախել ։ Ա՜, կայ Ոմն հզօրագոյն քան զԹագաւորս որ չարարար բռնաւորի անվերջանալի կարծուած ընթացքին առջեւ կարող է դնել ահագին անգանցանելի վերջակէտ ։

Ե՞րբ պիտի դնէ Նա զայդ մեծ վերջակէտ ։ Մարգարէից անկ է գուշակել ։ Սուլթան Համիտ 40 տարի թագաւորելու վստահութիւն ունի, և դեռ 16 տարի է որ ի գահ բարձրացած է ։ Հնտախտէ միայն կը վախէ նա, զի տէվրիշ պապա մի մարգարէացած է երբեմն թէ Նորին Վեհափառութիւն այդ ախտէն պիտի մեռնի ։ Օրհնեա՜լ մարգարէ, որոյ պատճառաւ Սուլթանն այնքան կատաղօրէն կը հալածէ զհնտախտն ի մայրաքաղաքէն և կ՚ուզ՝ զայն խեղդել իւր Մէքքէի օրօրանին մէջ իսկ ։ Փատիշահին այս ջանքն շատ օգտակար կրնայ լինիլ իւր հպատակաց, տէվրիշին մարգարէութիւնն իրաւ լինի կամ ոչ ։

Բայց Կարնոյ Թրքերն ալ մարգարէութիւն մի լսած պէտք է լինին օրերս, զի նշանակիչ յուզմանց մէջ են. իբր թէ Մոսկովի երկիւղալիկու գնդերուն առջեւէն սկսած են չուել գունդագունդ Հայաստանի մայրաքաղաքէն դէպ ի Փոքր Ասիա ։ Եթէ թռչնոց բնագաղթմանց չափ վստահելի լինէր նաև Թրքաց բնագաղթումն. պիտի կրնայինք այս չուն մօտալուտ փոթորկի գուշակիչ համարիլ. սակայն դժբաղդաբար ցարդ աւելի գիշատիչ գազանաց բնագաղթումներն ցուցած են մեր յարգելի դրացիք քան գաղթող թռչնեկաց ։

Կրնա՞նք աւելի վստահիլ Թուրք պաշտօնէից կարծեաց եթէ այս գաղթումն ներշնչեալ է ի նոցանէ ։ Պաշտօնէից քաղաքական հասկացողութիւնն վստահելի՞ է ։ Դուք դատեցէք հետեւեալ օրինակէն ։ Երբ Անգլիացի երկրաչափք հեռագրական թելեր կը հաստատէին ի Խարբերդ, Թուրք կառավարիչն պանծանօք ասաց թէ «այդ ամենեւին լուր հաղորդելու միջոց չէ, որպէս անգլիացիք կ՚ուզեն հաւանեցունել. ես ամենայն խնամով քննեցի թելերն և տեսայ թէ ծակ չկայ բնաւ թելին մէջ ընդ որ լուրն յղել կարելի լինի. այդ ձողերն ու թելերն ոչ այլ ինչ են բայց եթէ նշանք սահմանագլխոյ օսմանեան երկրի այն մասին վոր Ինկիլիզն պիտի գրաւէ....։»

Այս հանճարեղ մարգարէութիւն դեռ կատարուած չէ ։ Իսկ նոքա որք կ՚ասեն թէ Ռուսն շուտով սահմանագլխոյ նոր գիծ մի պիտի գծէ Կարնոյ հարաւային կողմէն, արդեօք լաւագոյն գուշակնե՞ր են — ապագայն պիտի ցուցնէ ։

ԿԱՐԻՆԷՆ ԹՈՒՐՔԵՐ ԿԸ ԳԱՂԹԵՆ

Յունվար 2 թուով հեռագիր մի կը ծանուցանէ թէ Կարնոյ Թուրք թաղերուն մէջ մեծ շարժում կայ ։ Թրքերն մեծ թըւով կը գաղթեն դէպ ի Եոզղատ, Թոգաթ և Էնկիւրիւ ։

Ուրեմն Թրքեր միրջապէս հաւատացեր են թէ Ռուսն պիտի գրաւէ զԿարին, և պիտի գրաւէ շուտով ։ Զրոյցն անցեալ տարուանէ ի վեր կար ։ վերջերս աւելի պատճառ ունեցեր են Թուրքք հաւատալու զրուցին ստուգութեան ։ Զրոյցն հիմն ունենայ թէ ոչ, առ այժմ օգուտն ունեցեր է որ Կարին կը մաքրուի բարբարոս Թրքաց բազմութենէն ։

Նկատողութեան արժանի է որ Թուրքքը, բարձրագոյն շրջաններէ ծագած թելադրութիւններու հետեւելով, իրենց խառացման նախընտրելի վայրն կը նկատեն Էնկիւրիւի և Եոզղատի կողմերն ։ Ճշմարիտ է թէ Դամասկոսի կողմերն արաբական ուրունութեան ոգին լաւ ասպարէզ չընծայեր Թրքաց ։

Տեսնենք Կ. Պոլսէ՞ն երբ պիտի սկսին մեր յարգելի հիւրերն գաղթել դէպ յԷնկիւրիւ, Փատիշահն ունենալով ի գլուխ կարաւանին ։

Ճշմարիտ, շատ փափաքելի բան է որ Թուրքիոյ ամեն մէկ ազգայնութիւնն զատուի, զատուի, և խասնոյ առանձին նահանգաց մէջ, փոխանակ այսպէս խառն բնակելու և զիրար ատելով հալածելու ։ Սան մի պատանիներն զատ տուն չե՞ն լինիր երբ տեսնեն թէ խաղաղ և համաձայն չեն կրնար բնակիլ ի միասին ։

Զատ տուն լինելէ յետոյ գժտեալք զիրար աւելի կը սիրեն ։ Երանի թէ նոյնըն իրականանար նաև Թուրքիոյ համար. բաժնուէին ու սիրէին, սիրէին ու դաշնակցէին, դաշնակցէին ու հզօր հանդիհանդիսանային ։

Երազն կարո՞ղ է իրականանալ աւելի քան մարգարէից սմանց գուշակութիւն ։

ՎԱՆԷՆ

ՏԽՈՒՐ ԼՈՒՐԵՐ

Քաղաքիս սոսկալի փիճակն քեզ նկարագրեմ։ Ցորենի չափն 70 դուրուշի հասաւ. ժողովուրդն անասելի չքաւորութեան մէջ է. սակ մնացած չէ իրենց մէջ, գործ չկայ որ վաստակ անեն, առուտուր աշխատանք բոլորովին դադարած են։ Հազարաւոր մարդիկ օրն ի բուն փուռերուն առջին խռնած հազիւ կրնան մէկ քաշ հաց առնուլ. մարդ գլուխ միայն 1 քաշ հաց կուտան։ Կառավարութիւնն բոլոր ամպարներն կնքեց և այժմ միայն փուռերուն ցորեն կուտայ. եթէ այսպէս չանէր, ցորենատէր հայ և Թուրք հարստարիչք մինչև հիմա 200 դահեկանի բարձրացուցած կը լինէին։ Քանի մի օր առաջ Սուլթանն 1,000 ոսկի նուիրեր է Վանայ աղքատաց բաշխուելու համար, բայց Հայերուն ոչ տուող կայ ոչ առնող։ Եթէ ազգային իշխանութիւնն չշարժի, սովն այս ձմեռ մեծ կոտորած պիտի անէ Վասպուրականում։

Այս սովին գլխաւոր պատճառ Քրդերն եղան։ Հնձոց մէկ մասն անքաղ մնաց, զի ոք ոչ համարձակ արտ գնալ կրնար, գնացողն յաճախ վիրաւոր կը դառնար։ Հազարէն մէկ օրինակ պատմեմ։ Ի Կոլլու (Վանէն 5 ժամ հեռու գիւղ մ'է), ամառն մի այրի կին արտ հնձելու կը գնայ և չի' վերադառնար. տղայքն կը վրդովին, դըրացիք կ'իմանան և մի քանի երիտասարդք կերթան ի խնդիր. երբ վայրն կը հասնին, կը գտնեն այրւոյն դիակն արիւնաշաղախ։ Հասկցուած է թէ Համիտիյէ զօրաց ձեռքով կատարուած է այս ոճիր։ Այս Քրդերու պահպանութիւնն նորօրինակ երեւոյթ առած է. Հայու հիւր կը լինին և կ'ասեն «Ազ Համիտիյէ մա մատ նախսամ»— «Ես Համիտիյէ եմ, մածուն չեմ ուտեր։» Պէտք է նմին մեծապատուութեան ոչխար, գոնէ հաւ մորթել կերցունել....։

Անցեալ բարեկենդանի հինգշաբթի օրն ի բանտի սպաննուեցաւ Տիգրան Շատուրեանց որ փոլիս Նուրիի դէպքին առթիւ բանտարկուած էր։ Տիգրան 15 տարեկան պատանի մ'էր, և իւր դատական քննութիւնք վերջացած չէին դեռ, կամ թէ լաւ ևս ասել, սկսած չէին դեռ։ Օր մի Շէքիր աւազակի եղբայր Ամէր զրպարտեց զՏիգրան իբր թէ իւր ապտէսթ առած պահուն պատանին պղծած լինէր իւր սուրբ աղօթքն, վրայ հասան ուրիշ քանի տարկեալք և ոստիկանքն, ծեծեցին, և քիչ ատենէն տղայն մեռաւ ի բանտին։ Բժշկաց հրաման չկար դարմանել զդանակարեալ տառապողն։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐՔ Ի ԶԱՐՍԱՆՃԱԳ

Թղթակից մի Զարսանճադ գաւառի տեղեկագրութիւնն կարդացած լինելով «Հայքի» մէջ, հետեւեալ տեղեկութիւններն կը հաղորդէ մեզ իբրեւ յաւելուած կամ հաւատիք ասածներուն։

«Աղաներուն իւրաքանչիւրն հինգ-տասն մարապայի տէր է, շատ նախապաշարեալ և նախանձոտ են Հայոց դէմ, և շատոնց ոչնչացուցած կը լինէին մեր անպաշտպան ժողովորդն եթէ ամեն բանի համար անոր կարօտ չլինէին։

«Ասկէ եօթն տարի առաջ Սվճոր գիւղն գնացեր էի ես գործով մի։ Այդ օր 25 տարեկան հայ երիտասարդ մի դաշտ կ'ելնէ բանջարեղէն ժողվելու, ուր կը պատահի Լէօմէն Աղայի աղախնոյն, և ի դարձին մեզ այցելեց երիտասարդն։ Հօրեղբայրն վրայ հասաւ և գոչեց, անիրա՛ւ, դեռ կեցե՞ր ես, հիմա պատիժդ կ'առնուս։ Եւ իրօք նոյն պահուն երկու տաճիկ և գիւղապետ Կ. Ալիքսանեան հասնելով երիտասարդն տարին։ Ի՞նչ կայ, հարցանք, կասկածանօք։— Կ'ասեն թէ Աղային աղախինն բռնաբարեր է։ Դուրս թռանք և ահա մեծ բազմութիւն խռնուած գտանք։ Սկսան զարնել տղուն. սա փախաւ, և Թուրքքք ետևէն վազեցին հասան, և կատաղած գանեցին այնքան որ խեղճն ուշաթափ և ուժասպառ մնաց մահամերձ։ Հայերն գրգռուեցան և Տաճիկ ու Հայ կնիկներ ղրկեցին որք աղախնոյն կուսութիւնն հաստատեցին, որով իմացուեցաւ թէ տղան զրպարտուած էր։ Յետոյ թշուառին ձեռքերն ետին կապած յղեցին Բերրի, կառավարութեան, ուր բանտարկուեցաւ։ Մէկ շաբաթ վերջ Քրդերն եկին երիտասարդին տունն կողոպտել ուզեցին. թէ-

պէտ չյաջողեցան բայց տղուն հայրն վախէն Բերրի գաղթեց։ Երկու ամիս յետոյ տղան Երիֆ՚ա տարին բանտարկեցին, ուր մեռաւ վերջապէս։» ԾՈՒԽ

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀԱՅՈՑ ՄԷՋ ԵՌԱՑՈՒՄՆ

Ի ՆԻՒ ԵՈՐՔ

Մի քանի Հայ երեւելեաց առանձին ժողով մի տեղի ունեցաւ ուր յատուկ հըրաւիրմամբ ներկայ լինելով Տէր Գ. Կրիլլի ընդհանուր գործակատար Ամերիկոյ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԻՆԱՑ ԵՒ ԿԱՐԳԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» խորհրդակցութիւն կատարուեցաւ Հայ Ամերիկացւոց իրաւունքներն ի Թուրքիա պաշտպանելու միջոցներուն վերայ։

Պատ. գործակատարն արդէն թըղթակցութիւն մ'ունեցած էր Տէր Կլատթընի հետ Հայոց Խնդրոյն նկատմամբ, և յօդուածներ հրատարակել սկսաւ մօտաւոր ժողովէն հետէ Ամերիկայի թերթերուն մէջ։ «Դաշնակցութեան» Հայ-Ամերիկեան ճիւղ մի կը կազմուի այժմ, Հայ-Ամերիկացւոց իրաւունքներն պաշտպանելու յատուկ նպատակաւ, և այդ ճիւղին մէջ մտնելու յօժարութիւն յայտնած են արդէն մի քանի նշանաւոր բնիկ Ամերիկացիներ։

Տ. Տ. Անտոնեանն Վարդուկեան մէկ մէկ նամակ հրատարակեցին Նիւ Եորքի թերթից մէջ քննադատելով Միացեալ Նահանգաց Նախագահին պատգամագրին այն մասն որ Հայոց կը վերաբերի։

Ի ՊՈՍԹԸՆ

Ընդհանուր ժողով մ'արին Յունվար 14ին, ուր խօսիւ քննադատեցին Պատ. Համլինի և Պորտի միսիոնարաց անպատեհ ընթացքն Հայոց Խնդրոյն և հայկական ջուղմանց վերաբերութեամբ։ Եթէ միսիոնարք բնաւ չխառնուին, ոչ ոք պիտի մեղադրէ զնոսա, բայց երբ Թրքաց թեր ելնելու երեւոյթ կ'առնուն առ երկիւղի կամ կեղծաւորութեամբ, Քրիստոսի պաշտօնէի և Ամերիկայի ազատ որդւոյ անվայել ճամբու մէջ մտած կը լինին— այդ էր ատենախօսներուն գլխաւոր միտքըն։ Ատենախօսքն էին Տ. Տ. Կ. Փափազեան, Մ. Հ. Կիւլէզեան, և Նշան Կարապետեան։ Այս վերջինս զօրաւոր հերքողական մի Պատ. Համլինի ձախող յօդուածոց ուղղած է Պոսթընի «Իվնինկ Րէճիսթըրի» մէջ։

Նաև Պոսթոնի Հայ-Ամերիկացիներն յատուկ նամակ մի ուղղած են Միացեալ Նահանգաց Նախագահին՝ առիթ առնլով Նորին վսեմութեան վերջին պատգամագրի այն մասէն որուն ծանօթ են մեր ընթերցողք։ Այդ նամակի օրինակն հրատարակուած է «ՊՈՍԹԸՆ ՀԷՐԱԼՏԻ» մէջ (Յունվար 16).

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՐ

ՈՐ ԱՐՈՒԵՍՏԱՒՈՐՆԵՐՆ ԱՒԵԼԻ ԹՈՇԱԿ Կ'ԸՆԴՈՒՆԻՆ ԵՒ ՈՐՈՆՔ ՆՈՒԱԶ ՃԱՐՏԱՐ ԵՒ ԱՆՃԱՐՏԱՐ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամերիկայի գործոց վիճակն շատ գէշ է այս տարի. բիւրաւոր գործաւորներ առանց աշխատանքի կը մնան և դեռ ամիսներով պիտի մնան։ Նիւ Եորք Նահանգի, ինչպէս և ուրիշ նահանգաց մէջ, քաղաքապետութիւնն հանրային շինութեանց կը ձեռնարկէ որպէս զի անգործներու գործ հայթայթէ և հասարակութեան նեղութիւնն թեթեւցունէ։

Մեր Հայ գործաւորաց ուշադրութեան արժանի խնդիր մ'է այն որուն վերայ այս անգամ պիտի խօսիմ։ Յայտնի է թէ ամեն գործաւոր մի և նոյն շաբաթականն չի ընդունիր։ Դիւրին գործի համար քիչ և դժուար գործի համար շատ վարձատրութիւն կը լինի։ Բայց ի՞նչ մտօք դիւրին և դժուար բառերն կը գործածեմք այս պարագային տակ։ 100 կամ 200 փաունտ ծանրութիւն ունեցող առարկաներ վերցունել, տանիլ բերել դի՞րին է, ո՛չ, շատ կը յոգնեցունէ, շատ զօրաւոր մարմին կը պահանջէ. նոյնպէս գետին փորել, քար կրել, հող կրել օրն տասն ժամ, շատ դժուար է, բայց և այնպէս այդ գործերն անող գործաւորներ շաբաթական չորսէն մինչև 6 կամ 7 տոլար կ'առնուն, վասն զի իրենց գործն անճարտար գործ է, unskilled labor (ընսքիլտ լէպըր), այսինքն խելք, մտքի յատկութիւններ պահանջող գործ

չէ. այդ տեսակ գործ ամեն մարդ որ առողջ է, կրնայ կատարել, և մարմնով առողջ գործաւոր գտնել դիւրին է, մինչդեռ ուշիմ, ճարտար, մտացի գործաւոր բաղդատաբար սակաւագիւտ է։

Եւ յայտնի է թէ ինչ որ քիչ կը գտնուի՝ թանկագին է, ինչ որ առատ կը գտնուի՝ աժանագին է։

Դիցուք թէ մէկ տոլար արժէք ունեցող երկաթի կտոր մը գնեցինք, որմէ զանազան գործիներ չինել կ'ուզեմք։ Կարող եմք աժան բաներ չինել և սուղ բաներ չինել։ Եթէ չինեմք երկաթուղւոյ երկաթ, քիչ խելք գործածելով կրնամք չինել, եթէ պայտ (նալ) չինել ուզեմք, այդ քիչ մ'աւելի խելք կը պահանջէ. եթէ սղոց չինել ուզեմք, ա՛լ աւելի. եթէ մկրատ (մախաս) չինել ուզեմք, շատ աւելի, և եթէ զմելիի (չախը) շղբիկ չինել ուզեմք, յանհունս աւելի ճարտարութիւն պէտք է գործածեմք քան եթէ չինէինք երկաթուղւոյ երկաթ։

Մեծ երկաթի զանգուածն ծեծելու համար խոշոր կռաններ և հուժկու բազուկներ պէտք են, իսկ շղբիկ չինելու համար փոքրիկ կռան և քիչ ոյժ բայց մեծկակ գլուխ և ճարտար ձեռք պէտք են։

Եւ այժմ տես թէ մէկ տոլարի երկաթն ինչքան տարբեր արժէք կ'ունենայ եթէ անով չինուի

Երկաթուղւոյ երկաթ	1 տոլար	10 սէնթ
Պայտ	2 տ.	55 ս.
Փայտի սղոց . .	14 տ.	28 ս.
Լաւ մկրատ . .	446 տ.	94 ս.
Զմելւոյ շղբիկ .	657 տ.	14 ս.

Այս հաշիւն 1832ին եղած է, բայց այժմ ալ լաւ կը ծառայէ խնդիրն բացատրելու։ կը տեսնեմք թէ ճարտար գործաւորն աւելի վարձատրութեան արժանի է վասն զի նորա շնորհիւ է որ աժան, հում նիւթն կը փոխուի թանկագին առարկայի, և երբեմն իւր նախնական արժէքին 600 կամ 1,000 անգամն կ'ունենայ։

Մասաչուսէց Նահանգին 1884 տարւոյ վիճակագրութենէն կը տեսնուի թէ զանազան ճարտարարուեստութեանց մէջ գործաւորաց շաբաթական թոշակն որքան եղած է։

Ճարտարարուեստք	Գործաւորաց շաբաթական Այր	Կին	Դեռահաս
	տ. ս.	տ. ս.	տ. ս.
Զգեստեղէն	17.37	7.51	3.86
Տպագրութիւն և Հրատարակութիւն	15.58	6.30	4.73
Ապակի	15.03	4.67	5.41
Շէնք չինելու արհեստք . .	14.96	—	—
Մարմար	14.44	—	7.50
Գլխարկ, մուշտակ, բուրդ և մետաքս	14.20	7.64	4.68
Կոշիկ և մոյկ	13.75	8.66	4.63
Կառք	13.88	—	5.60
Մետաղք և մետաղեայ վաճառք .	12.38	2.41	4.67
Մեքենայք	12.04	5.12	5.76
Կահ կարասիք . . .	11.81	6.10	5.52
Արհեստագործի գործիք . .	12.02	—	5.00
Երկրագործական գործիք . .	10.36	—	7.69
Կղմինտր	8.36	—	—
Բամպակէ վաճառք . . .	9.44	5.90	4.30
Փայտեղէն վաճառք . . .	12.49	—	6.00
Բրդեղէն վաճառք . . .	7.67	6.54	4.93
Բամպակէ հիւսուածոց տպելն, ներկելն, ճերմկցուցնելն	10.05	5.28	4.64

կանանց և դեռահասից թոշակն արանց թոշակին գրեթէ կէսն է, այն պատճառաւ որ կինն և դեռահասն ընդդատաբար դիւրին մասերն ունին աշխատանքի բաժանման մէջ։ Շէնք շինելու արհեստներուն մէջ կին բնաւ գործ չի կատարեր։

Իսկ այն կիներ որք ճարտար գործերով կը զբաղին, ինչպէս ողագիր, տառագիր, գծագիր և գեղագիր կանայք, կը ստանան բարձր վարձատրութիւն։

Շատ հետաքրքրական է գիտնալ թէ Ամերիկայի Հայոց հարիւրին քանի՞ն ճարտար և քանի՞ն անճարտար գործաւոր են։ Գիտնալ նաև թէ քանի՞ն գործի անճարտար բաժինէն կը սկսին և աստիճանաբար կը բարձրանան միջակայ և ճարտար բաժանմանց։ Քանզի պէտք է միտք բերել թէ, թէպէտ գործերն յանճարտար և ի ճարտար բաժնեցինք, կան կարգ մի գործեր ալ որ փոքր ի շատէ ճարտարութիւն կը պահանջեն և երկու կարգաց միջակայ կացութիւն մի ունին։

Որքան որ մեր դիտողութիւն կը գրէ, այն կարծիք ունիմք թէ մեր հայ գործաւորներն աւելի ճարտար կամ կէս-ճարտար գործեր կ'անեն քան Իտալացիք և ուրիշ մի քանի ցեղեր։ Սակայն եթէ մեծ գաղթականութեանց մէջ հաճին վիճակագրութիւն պատրաստել նշանակելով անունն, գործն, թոշակն ճշդիւ և ճշմարտիւ, և յղեն մեզ, շնորհակալութեամբ կը հրատարակեմք, Այդպիսի վիճակագրութեան մէջ պէտք է նշանակել այն դէպքեր յորս գործաւորն առաջ անճարտար էր ու այժմ ճարտար է։

ՔԱՋԱԼԵՐԻՉ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Պարսկաստանի Ջուղայէն հայրենակից մի կը գրէ մեզ.—

«Յոյս ունիմ որ կուգայ ժամանակ և ո՛չ այնքան ուշ, երբ ամբողջ Հայ ազգն կը համակրէ ձեզ, և կը գովէ ու կը յարգէ ձեր գաղափարներն որ ինչքան վսեմ այնքան պարզ և մշակուած են։»

Ց. Տ. Կ. Ց.

Պուլկարիայէն կը տողէ հայրենակից մի, ի միջի այլոց գնահատելէն— «...Կարծես մի նոր կեանք, արիութիւն և վսեմութիւն առաւ այս տարի ձեր բոլոր գրածներն. գաղափարաց և դատողութեանց առնացի երեւոյթն կը յափշտակեն զվերածնողսն, կը կարկամեն հակառակորդներն։ ... ՀԱՅՔի ամեն մէկ համարն մէյ մէկ գաղափարներու և մտքերու իբր հընոց դուրս կուտաք հեղեղանման և կ'ողողէք բոլոր հայ մտքերն։» Մ.

Այլ Հայրենակից մի կը գրէ Մասաչուսէցէն.—

«Ձեր վիպական ժողովոյ նկարագրութիւնը կարդալով այնքան զմայլեցայ ՀԱՅՔի վրայ որքան չէի զմայլած երբէք։ ... Աւա՜ղ որ չեմ կարող ուրիշ կերպով բացատրել ձեզ իմ սրտիս ջերմ համակրութիւնն, անկեղծ բարեմաղթութիւնքն ու յարգանքը բայց եթէ կրկնելով թէ պատիւ պիտի համարիմ ինձ լինիլ միշտ մին ի բարեկամաց և պաշտպանից պատուական «Հայք»ի։»

Փրովիտէնսէ Տէր. Տ. կը գրէ Յունվար 22 թուով։

Ձեր վսեմ թերթը հիացմամբ կը կարդամ և առանց ձեր գիտնալուն կ'աշխատիմ բաժանորդներ աւելցնելու։ Կը պատահի որ ...ք նախատեն զիս այս բանին համար, և սակայն ես ինծ ուրախութիւն կը զգամ որ ուրիշներ զիս ձեզի գաղափարակից կը համարին. և գիտեմ թէ չէ թէ միայն ես այլ ամբողջ Հայ ժողովուրդը պէտք է խմորուի այդ գաղափարներով։ Խնդրոյն հոգին հասկցող մարդիկ ունիս հոս ժողովուրդին ամեն կարգին մէջ։

Այլ հայրենակից մի ստացանք հետևեալն։

Քիչ ժամանակ է որ եկած եմ Ամերիկա, երբ ձեր թերթին մէկ համարը կարդացի, փափաք զգացի ուրիշ մ'ալ կարդալու, և երբ երկու համար կարդացի, չկրցայ դադրիլ մինչև որ հին տարիներուն բոլոր համարները կարդացի ծայրէ ի ծայր, բոլորովին ժամանակս տալով այս հրապուրիչ, յափշտակիչ թերթին. և երբ ամենն մէկ անգամ կարդացի, մէկ մասն երկրորդ անգամ կարդալու անդիմադրելի բաղձանքն զգացի։ Այսպէս եղաւ իմ ծանօթութիւնս ձեր յոյժ պատուական թերթին հետ։ Ընդունեցէք շնչին օգնութիւնս— երկու տոլար— բայց իմ անունս կը խնդրեմ չյիշէք թերթին մէջ և ոչ ալ մ'ը դպրոց լինելս. պատճառը յայտնի է, Աստուած վերցնէ ... պատճառը ... շուտով։

* * *

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23d St.,
New York,
U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրի համար
երկու տոլար կամ տասն Ֆրանք
կանխիկ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Պարսկաստանի Թեհրան քաղաքէն «Թէհէրան» ստորագրութեամբ նամակ մի ստացանք, անգլիերէն գրուած, որով նամակագիրն կը գանգատի թէ թերթիս հայերէնն անհասկանալի է Պարսկահայոց և արեւելեան հայերէն խօսող մեր հայրենակցաց, և փափաք կը յայտնէ որ արեւելեան հայերէնով խմբագրեմք զ«Հայք»։

Հրապարակաւ կը պատասխանեմք թէ—

Նախ, չեմ կարծեր թէ թերթիս հայերէնն դժուարահասկանալի է պարսկահայոց։ Ռուսիոյ, Ծավայի, Հնդկաստանի ընթերցողք մեր երբէք այդպիսի գանգատ յայտնած չեն մեզ։ Թրքահայոց կամ արեւմտեան հայերէնն անշուշտ կրնայ քիչ մի խորթ հնչել արեւելեայց, բայց ոչ դժուարահասկանալի։

Երկրորդ, մեր ընթերցողաց մեծ մասըն արեւմտեան հայերէնին աւելի ընտանի են քան արեւելեանին։

Երրորդ, ամեն նկատողութիւն մէկդի առած՝ արեւմտեան հայերն աւելի մաքուր և լաւ հայերէն է քան արեւելեանըն, և արժան է որ արեւելեան գրողները մերձենան տակաւ արեւմտեան հայերէնին որպէս զի ազգային լեզուի բաղձալի միութիւնն աւելի շուտով իրանայ։

ՇԱՒԻՂ անուն շաբաթաթերթի մի հըրատարակութեան ծանուցումն ստացանք Թեհրանէն։ Թերթն պիտի լինի Ազգային, Գրականական և Քաղաքական։ Արտասահմանում բաժանորդագինն տարեկան ութ Ֆրանք, այն է մէկ տոլար վաթսուն սէնթ Հասցէն— Խմբագրութիւն «Շաւիղ»ի
Թեհրան, Պարսկաստան

Դամասկոսի միւսիւլմաններն կ'եռան ու կը զեռան մզկիթին վերաշինութեան համար որուն հրկիզումն յանիրաւի վերագրելով քրիստոնէից՝ մի քանիներն նեղեցին և մի քանի եւրոպացիներ նախատեցին։

Ֆռանսական ԹԱՆի մէկ թղթակցութենէն կը տեղեկանամք թէ Թուրքիոյ տարեկան ներածմունք (միջին հաշուով 1889 էն 1891) կը հասնին 500 միլիոն Ֆրանքի, և իւր արտածմունք 318 միլիոնի։
Անգլիա կ'արտածէ ի Թուրքիա 217 միլիոնի վաճառք, Աւստրիա-Հունգարիա 99 միլոնի և Ֆռանսա 61 միլիոնի։

Թրքական վաճառաց արտածումն յԱնգլիա է տարին 121 միլիոնի, յԱւստրիա-Հունգարիա 27 միլիոնի, և ի Ֆռանսա՝ 91 միլիոնի։

Ուրախութեամբ կը տեղեկանամք թէ վերջին ամիսներուս մէջ գործի նուազութեան պատճառաւ Տաճկաստան վերադարձած Ամերիկայի հայ երիտասարդք մեծ մասամբ կ'ամուսնանան հոն։

Նիւ եօրքի մէջ հայ գործաւոր դասն այս ձմեռ այլապէս շատ զբաղած չլինելով, աւելի ժամանակ կուտայ անգլիերէն ուսանելու։ Այժմ երեք տարբեր դասեր կան, իւրաքանչիւր 25—30 երեկոյեան ուսանողներէ բաղկացեալ, և մէկ դաս ալ կայ նուազ շատուոր։ Երիտասարդաց այս ջանքըն շատ գովելի է։

Յունվար 22 թւով կը գրեն մեզ Պոսթընէ—

«Ռաֆֆի դերասանական խումբն» որ վրջերս կազմուած է այստ, կը պատրաստուի ազգային ներկայացում մը տալ փետրվարի մէջ։

Պոսթոնի Լուսաւորչական և Բողոքական Հայեր միացեալ կրօնական պաշտամունք կը կատարեն ամէն կիւրակէ վարձեալ սրահի մը մէջ, ուր կ'երգուին շարականք և բողոքական երգեր, և կէս ժամ ալ

քարոզութիւն կը լինի և Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութեան վրայ պարբերաբար կը խօսուի։

Խմբագիր Տէր,

Հնչակեան Յ. Կուսակցութեան Ամերիկայի բոլոր Մասնաճիւղերը անցեալ Դեկտ. 31, 1893 թուականին իրենց պատգամաւորներու միջոցաւ ընդհ. ժողով մի գումարեցին ի Փրովիդենս. ուր ի մէջ այլոց միաձայնութեամբ որոշուեցաւ յայտարարել «ՀԱՅՐ»ի մէջ հետևեալ դիտողութիւնը։

Վերջին ամիսներս «ՀԱՅՐ»ի մէջ «Հնչակեան» կամ «Ջերմ Հնչակեան» ստորագրութեամբ յօդուածներ երևան եկան, որոց մէջ յօդուածագրերն կը քննադատեն կուսակցութեան ծրագրի այս կամ այն կէտը և կամ դիտողութիւններ կընեն նորա գործունէութեանց մասին. որով կը շփոթեն շատ մը միամիտներու մաքերը Հնչակեանց Համերաշխութեան մասին. ուստի պարտք կը համարեմք պաշտօնապէս յայտարարել թէ Ամերիկեան Հնչակեան մասնաճիւղերու մէջ և ոչ մի անդամ կայ. ուրէք դիտողութիւն ունենայ Հնչակեան կուսակցութեան վերաբերեալ և կամ համաձայն լինի «Հայք»ի մէջ հրատարակուած յօդուածոց հետ. և այդ «Հնչակեան» կամ «Ջերմ Հնչակեան» ստորագրող անձինք երբէք Հնչակեանց անդամ եղած չեն և չեն։

Յարգանօք Ձերդ ի Դիմաց Մասնաճիւղերի պատուիրակաց։

Աաենադպիր, Մ. Ի. Սարգիսեան

Պատ. Գարեգին Զթճեան, Ուուստրի բողոքական Հայ եկեղեցւոյ քարոզիչ, հրաժարած է պաշտօնէն, և հրաժարականն յակամայիս ընդունուած է։

Հ. Ե. Ռ. Ը.

Հայ Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերակցութեան Ամսական Հանդէսն պիտի տեղի ունենայ Շաբաթ երեկոյ, Յունուար 27, ժամը ճիշդ 8ին, ի թիւ 142 Ուէսթ, 21րդ Փողոց։

Հարիւրապետ Տ. Ա. Նէզպիթ (7րդ զօրագնդէն) պիտի խօսի Ամերիկայի Ազգային Բանակին վրայով։ Պիտի ըլլան ջութակ, երգեր և այլն։ Մուտքը ձրի է։

ՀԱՆԴԻՍԻ ՄԱՍՆԱԽՈՒՄԲՆ։

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք գինուորական կրթութեան, բաղում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2ու կէս ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Բաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցունելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն։ Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։

Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

*

* *

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէ՞ք, Հայեր։

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք։

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէռ, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ՚ընդունին հազար թալէռ, եթէ պայմանն հազար թալէռի է, կամ մինչև հինգ հազար թալէռ, ըստ պայմանին։

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանադրեալ հազար կամ աւելի թալէռն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի։

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9*դ Փողոց*
Պրոտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանելու թէ
1554 B,way
46 *և* 47 *փողոցներուն միջև*

Constantinople Bazzar*ի*, (*ՔՈՆՍԹԱՆԹԻՆՈՓԼ ՊԱԶԱՐ*) *մէջ ունի Թրքական մեծաքանակ գորգեր(խալիներ)և Թրքական ուրիշ ապրանք, զորս կ՚ուզէ բոլորովին ծախել լծիցունել յոյժ ԴԻՒՐԱԳՆԻ, ՀՈԼՍԷՅԼՈՎ* (wholesale)*։ Արդ, վաճառականներ որոնք այս գործով կը զբաղին, կրնան այս պատեհութենէն օգուտ քաղել, աժանագին հոլսէյլ ապրանք գնելու։*

FRANCOIS FRENTZ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ

311 SEVENTH AVE. NEW YORK
27*դ և* 28*դ փողոցաց միջև*

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԵՂԱԳՈՐԾ

(*Հաստատեալ ի* 1849)

65 Front St. Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7*դ Էվինիու* *Նիւ Եորք*
26*դ և* 27*դ Փողոցներուն միջև*
Դեղագրեր կը շինուին խնամով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ